“ՀԱՍՏԱՏՎԱԾ Է”

“Յունիբանկ” ԲԲԸ
“ 02 ” 05 .2016թ.
որոշմամբ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

“ՅՈՒՆԻԲԱՆԿ” ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

"Յունիբանկ" ԲԲԸ-ն իր հաճախորդներին բարձր որակի ծառայություն մատուցելու, տեղեկատվական սպառնալիքներից պաշտպանելու, հաճախորդներին վերաբերող տեղեկությունների գաղտնիության, ամբողջականության պահպանման համար և մշտապես իր կողմից մատուցված ծառայությունների որակի և անվտանգության բարելավման նպատակով "Յունիբանկ" ԲԲԸ-ի ղեկավարությունը որոշեց ներդնել Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 27001:2013 ստանդարտի պահանջներին համապատասխան:

"Յունիբանկ" ԲԲԸ-ն իր գործունեության մեջ կիրառում է նորագույն սարքեր, տեխնոլոգիաներ և լավագույն ընկերությունների կողմից մշակված ծրագրային ապահովում:

"Յունիբանկ" ԲԲԸ-ն իր գործունեության անընդհատության ապահովման համար ստեղծել է պահուստային տարածք և տեղեկատվական համակարգեր:

ՆՊԱՏԱԿ

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի նպատակն է՝ ապահովել "Յունիբանկ" ԲԲԸ-ի, ներառյալ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, պահպանել տեղեկատվության հասանելիությունը, գործունեության անընդհատությունը և նվազեցնել կորուստների ռիսկը՝ տեղեկատվական անվտանգության միջադեպերի և դրանց հնարավոր ներգործության կանխման միջոցով:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականության նպատակն է "Յունիբանկ" ԲԲԸ-ի տեղեկատվական ակտիվները ներքին, արտաքին, կանխամտածված և պատահական սպառնալիքներից:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը երաշխավորում է.
   - տեղեկատվության պաշտպանությունը ցանկացած ոչ արտոնված օգտագործումից,
   - տեղեկատվության գաղտնիության ապահովումը,
   - տեղեկատվության ամբողջականության պահպանումը,
   - բիզնես գործընթացների համար տեղեկատվության հասանելիության պահպանումը,
   - համապատասխանությունը օրենսդրական և կանոնակարգող պահանջներին,
   - գործունեության անընդհատության պլանների մշակումը, պահպանումը և փորձարկումը,
   - տեղեկատվական անվտանգության ուսուցման հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար:
2. "Յունիբանկ" ԲԲԸ-ում մշակվում և ներդրվում են Տեղեկատվական անվտանգության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ ընթացակարգերը:
3. Ապահովվում են տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի հասանելիության բիզնես պահանջները:

4. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության պահպանման և ներդրման ընթացքում օժանդակության և խորհրդատվության համար պատասխանատու է Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտի տնօրենը:
5. "Յունիբանկ" ԲԲԸ-ի ղեկավարությունը ուղղակի պատասխանատվություն է կրում Տեղեկատվական անվտանգության քաղաքականության իրականացման և իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների կողմից սահմանված պահանջներին համապատասխանության համար:
6. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության կատարումը պարտադիր է:

Սույն հայտարարագիրը մշակվել է հաշվի առնելով "Յունիբանկ" ԲԲԸ-ի Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը:

Ամսաթիվ 02.05.2016թ.

Պաշտոն՝ Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտի տնօրեն,

ՏԱԿՀ մենեջեր՝ Լուսինե Սիմոնյան